Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 26 -ի N 354 - Լ որոշման

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրով նախատեսված միջոցառումների հիմնական նպատակները.

- **ըստ ոլորտների օժանդակել ՀՀ առանձին տնտեսավարողներին՝ կորոնավիրուսի տարածման հետևանքով կանխատեսվող ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերը մեղմելու նպատակով,**
- **տնտեսության կայուն և շարունակական զարգացումը,**
- **պետության կողմից կապիտալ ներդրումների առաջնահերթությունների ճշգրտումը և իրականացման գործընթացի ակտիվացումը,**
- **կորոնավիրուսի հետևանքով աշխատանք կորցրած անձանց այն խմբերի (այդ թվում՝ ինքնազբաղվածներին) բացահայտումը և օժանդակումը, որոնց համար այլ աշխատանք գտնելը մոտակա ժամանակահատվածում կարող է անհնարին լինել,**
- **ապահովել սոցիալապես անապահով, սոցիալական խոցելի խմբերի սոցիալական անվտագությունը, աջակցել նրանց և նրանց ընտանիքների տնտեսական կայունացմանը,**
- **կորոնավիրուսի դեմ արդյունավետ պայքարի նպատակով առողջապահական համակարգի վերազինումը,**
- **պարենային, դեղորայքային, հումքային, իրային և այլ անհրաժեշտ պահուստների կառավարման արդյունավետության բարձրացումը,**
- **ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման պլանի հաստատումը՝ ըստ աղբյուրների և ինդիկատիվ չափերի:**

2. Տնտեսավարողներին օժանդակության նպատակը.

2.1. Օժանդակության նպատակն է տնտեսավարողների համար պայմաններ և հնարավորություն ստեղծել՝ պահանջարկի փոփոխվող պայմանները վերլուծելու, դրանց արձագանքելու և ըստ այդմ գործունեությունը շարունակելու և զարգանալու համար:

2.2. Միջոցառումները կիրականացվեն հաշվի առնելով՝

- **թիրախային ոլորտները և ենթաոլորտները,**
- **տնտեսավարողների չափերը (միկրո, ՓՄՁ, խոշոր),**
- **սպառման ներկա և հեռանկարային շուկաները (արտաքին, ներքին):**

3. Տնտեսության կայուն և շարունակական զարգացման միջոցառումների նպատակը.

3.1. Ընթացիկ տնտեսական շոկերի հետևանքով համաշխարհային տնտեսության մեջ տեղի կունենան զգալի վերադասավորումներ, ինչպես նաև՝ պահանջարկի և առաջարկի վերաիմաստավորում: Կբացվեն նոր շուկաներ, կառաջանա նոր տիպի ապրանքների և ծառայությունների պահանջարկ:

3.2. Ըստ այդմ, կիրականացվեն՝

- **նոր հեռանկարային ոլորտների ուղղությամբ տնտեսավարողների ռազմավարական նախաձեռնությունների իրականացման խթանմանը նպաստող միջոցառումներ, այդ թվում՝ դրանց ֆինանսավորման և համաֆինանսավորման գործիքների ներդրման միջոցով,**
- **նոր հեռանկարային ոլորտներում նոր ուղղությունների համար մասնագիտական ներուժի կարողությունների զարգացմանը և վերամասնագիտացման հնարավորությունների ընձեռմանն ուղղված միջոցառումներ:**

4. Պետության կողմից իրականացվող ներդրումների ակտիվացման միջոցառումները.

4.1. Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության մեջ սպասվող զգալի վերադասավորումները և դրանց ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա՝ կիրականացվեն պետության կողմից ներդրումների առաջնահերթությունների ճշգրտման և իրականացման գործընթացի ակտիվացման միջոցառումներ:

5. Առանձին սոցիալական խմբերին օժանդակելու միջոցառումների նպատակը.

5.1. Ընթացիկ իրավիճակում անհրաժեշտ կլինի բացահայտել և օժանդակել աշխատանք կորցրած անձանց այն խմբերին (այդ թվում՝ ինքնազբաղվածներին), որոնց համար այլ աշխատանք գտնելը, այդ թվում՝ վերամասնագիտանալը և դրա արդյունքում աշխատանք գտնելը, մոտակա ժամանակահատվածում կարող է անհնարին լինել:

5.2. Ըստ այդմ, կիրականացվեն խոցելի խմբերին նյութական օժանդակության, ինչպես նաև այդ խմբերի վերամասնագիտացման կամ վերապրոֆիլավորման միջոցառումներ:

6. Առողջապահական համակարգի վերազինման միջոցառումների նպատակը.

6.1.Հաշվի առնելով աշխարհում կորոնավիրուսի տարածման դրսևորումները և միտումները՝ դրա դեմ արդյունավետ պայքարի նպատակով կիրականացվեն հանրային առողջապահական համակարգի հզորացման և վերազինման միջոցառումներ:

6.2. Ըստ այդմ, կիրականացվեն՝

- **հանրային առողջապահության ոլորտում արտակարգ իրավիճակներին արձագանքման մեխանիզմների, համաճարակաբանական դիտարկման, կանխարգելիչ միջոցառումների և ախտորոշման համակարգերի հզորացում,**
- **կորոնավիրուսային հիվանդության հետ կապված առողջապահության ոլորտում կանխարգելիչ գործառույթներ, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մարդկային ներուժի զարգացման միջոցառումներ,**
- **կորոնավիրուսային հիվանդության բուժման և պացիենտների վերականգնողական ծառայությունների շարունակականության և արդյունավետության բարձրացման գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ բժշկական նյութատեխնիկական բազայի ձևավորում, այդ թվում՝ կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և բուժման նպատակով դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում:**

7.Պարենային և ապրանքանյութական պահուստների արդյունավետ համալրման միջոցառումների նպատակը.

7.1. Հաշվի առնելով աշխարհում կորոնավիրուսի տարածման դրսևորումները և միտումները՝ կիրականացնվեն պարենային, դեղորայքային, հումքային, իրային և այլ անհրաժեշտ պահուստների արդյունավետ համալրման միջոցառումներ:

7.2. Ըստ այդմ, հաշվի առնելով սեզոնայնության, պահանջարկի և այլ երկրների կանխարգելիչ միջոցառումների տրամաբանությունը՝ կսահմանվեն առաջին անհրաժեշտության ապրանքների նոր ցանկեր և կիրականացվեն դրանց պահուստավորման և պահպանման միջոցառումներ՝ հաշվի առնելով հայաստանյան ձեռնարկությունների արտադրական ներուժը վերոնշյալ ցանկերի ապրանքների արտադրության համար:

8.Անհրաժեշտ ֆինանսական միջոցների հասանելիության և արդյունավետ օգտագործման միջոցառումներ.

8.1. Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող իրադարձությունները ենթադրում են ֆինանսական միջոցների ծախսման ուղղությունների ճշգրտումներ և ֆինանսական միջոցների ծախսման արդյունավետության կտրուկ աճ:

8.2.Ըստ այդմ, կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- **պետական գնումների նպատակով բյուջետային ծախսերի անհրաժեշտ վերադասավորումներ,**
- **միջազգային ֆինանսական կառույցների հետ իրականացվող վարկային ծրագրերի ճշգրտումներ,**
- **դոնոր կազմակերպությունների հետ դրամաշնորհային ծրագրերի նպատակների ճշգրտումներ,**
- **անհրաժեշտության դեպքում, սույն ծրագրի իրականացման նպատակով ֆինանսավորման նոր աղբյուրների ստեղծում:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ